# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ա/Ձ Հասմիկ Օհանյան-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | DLAB | DLAB | Մագնիսական խառնիչ տաքացմամբ: Իրանը մետաղական է և քիմիական ազդեցությունից դիմացկուն փոշեներկով: Սարքը ունի հանվող հենարան սենսորների (ջերմաստիճան, pH և այլն) տեղադրման համար: Հավաքածուն ներառում է տեֆլոնապատ ցիլինդրիկ մագնիսական էլեմենտ՝ ընդհանուր կիրառման համար: Սարքը ունի գերտաքացումից պաշտպանություն, որը ավտոմատ անջատում է տաքացումը սահմանված ջերմաստիճանից բարձր լինելու դեպքում: Լրացուցիչ ֆունկցիա՝ տաքացումը անջատելու, եթե մակերեսի ջերմաստիճանը գերազանցում է սահմանվածից ավելի քան 30°C: Մագնիսական խառնիչը կարող է օգտագործվել հետևյալ գործողությունների համար՝ օրգանական սինթեզ, էքստրակցիա, նավթամթերքների անալիզ, pH չափումներ, դիալիզ, հողի սուսպենդավորում, բուֆերային լուծույթների պատրաստում և այլն: Սարքը կարող է աշխատել +4°C-ից մինչև +40°C ջերմաստիճանային միջակայքում՝ խոնավությամբ մինչև 80%: Տեխնիկական պարամետրեր. Պտտման արագությունը՝ առնվազն 100-1500 պտ/ր տիրույթում, ջրի առավելագույն ծախսման ծավալը՝ 20 լ, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ջերմաստիճանի կարգավորում՝ RT-550℃, ջերմաստիճանի հավասարաչափություն՝ ±1°C, տաքացման ժամանակ մինչև +330°C՝ ոչ ավել, քան 15 րոպե, անընդմեջ աշխատանքի տևողություն՝ առնվազն 168 ժամ, աշխատանքային մակերեսի տրամագիծը՝ 215x360 մմ, մակերեսի նյութը՝ ալյումինե համաձուլվածք կամ համարժեք, մագնիսական էլեմենտի երկարությունը՝ 10-ից մինչև 50 մմ, հեղուկի առավելագույն մածուցիկությունը՝ մինչև 1170 mPa·s: Վթարի ցուցիչի առկայություն՝ ձայնային ազդանշանով և տաքացման անջատմամբ։ Քաշը՝ ոչ ավել, քան 3կգ։ Ցանցի լարում՝ 230Վ, 50/60Հց կամ 120Վ, 50/60Հց։ Սարքի հետ կտրամադրվի բոլոր անհրաժեշտ պարագաները լիարժեք աշխատանքի համար։ Անձնակազմի ուսուցում։ Երաշխիքային ժամկետ՝ 2 տարի։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АСМИК ОГАНЯН ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | |